

## «Գծանկար» առարկայի քննական ծրագիր

«Գծանկար» առարկայի քննության ժամանակ հանձնարարվող առաջադրանքը նատյուրմորտ է՝ հարթ ֆոնի վրա 2-3 գիպսե առարկաներից, գրաֆիտե մատիտով պարզ լուսավորությամբ՝ A2 ֆորմատի թղթի վրա:

Նատյուրմորտ.

- պարզ երկրաչափական մարմիններից (խորանարդ, բուրգ, գլան, կոն, բազմանիստ, գունդ) և կենցաղային որևէ փայլատ (փայլ չունեցող՝ կավ, մետաղ) առավելագույնը 4 իրից կազմված հորինվածք ծալքավոր կտորի ֆոնի վրա:

Պահանջվում է.

- առարկաների գրագետ կառուցում, նրանց համաչափությունների պահպանում և ծավալների ճիշտ պատկերում լույսի ու ստվերի միջոցով,
- հեռանկարի կանոնների օգնությամբ առարկաների և նրանց դիրքերի ճիշտ պատկերում տարածության մեջ,
- վերջնական մշակում, առարկաների, նյութերի տարբերակում, նյութականության ճիշտ պատկերում (գիպս, կավ, մետաղ), ընդհանուր պատկերի ճիշտ ներկայացում:

## ՔՆՆԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ

Գնահատումը կատարվում է 20 միավորանոց սանդղակով՝ ըստ հետևյալ բաղադրիչների.

1. հորինվածքի գրագետ տեղադրում A2 թղթի չափի մեջ՝ մինչև 5 միավոր,
2. կառուցողական մոտեցում, ծավալների տարածաձավալային պատկերում՝ մինչև 5 միավոր,
3. ծավալների տոնային ընկալում և նյութականության ստացում՝ մինչև 5 միավոր,
4. հորինվածքի եզրափակիչ մշակում (մանրամասների ընդհանրացում)՝ մինչև 5 միավոր: